

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
34

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
34

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

34

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Ս. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

*«Բանբեր Մատենադարանի» 34, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ին-տ. Երևան, 2022: 448 էջ (ներդիր 8 էջ):*

*«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են
պատմությունը, բանասիրությունը, արվեստին նվիրված հոդվածներ և այլ նյութեր:*

**ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ԱԼ. ԵՐԻՑՅԱՆԻ ԱՐԽԻՎ .
«ՀՅՈՒՍԻՍԱՓՈՎՅԼ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿԿՄԱՆ
ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ¹**

Բանալի բառեր՝ Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, Ստեփանոս Նազարյանց, Հյուսիսսափայլ ամսագիր, հրատարակման պատմություն, թույլտվություն, ազատ մամուլ, ռուսաց քաղաքականություն:

Նախաբան

Մաշտոցյան Մատենադարանում Ալ. Երիցյանի արխիվի ուսումնասիրության ընթացքում մեր ուշադրությունը գրավեցին հատորներից մեկում խնամքով պահպանված և միմյանց հաջորդող վավերագրեր, որոնք բացահայտում են Ստեփանոս Նազարյանցի կողմից «Հյուսիսսափայլ» ամսագրի հրատարակության հանգամանքներն ու նախապատմությունը: Այս վավերագրերի մի մասը դուրս է մնացել մեր ուսումնասիրողների ուշադրությունից², թեպետ ակնհայտ է դրանց աղբյուրագիտական կարևորությունը, քանի որ լուսաբանում են նշանավոր պարբերականի լույսընծայման հանգամանքները:

**Ա. Ստ. Նազարյանցի դիմում-խնդրանքը
ամսագիր հրատարակելու մասին**

Ամեն ինչ սկսվում է Ռուսաստանի ժողովրդական Լուսավորության նախարար Նորովին 1856 թ. մարտի 13-ին Ստեփանոս Նազարյանցի դիմում-խնդրանքով, որում հանգամանորեն տեղեկացնում է Մոսկվայում հայերեն լեզվով ամսագիր հրատարակելու իր մտադրության մասին: Նամակը, ցավոք, Ալ. Երիցյանի արխիվում չի պահպանվել, սակայն դրա հիմնական բովանդակությունը մանրամասն շարադրված է Լուսավորության նախարարի՝ 1856 թ. օգոստոսի 24-ին

* ԵՊՀ, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, պ.գ.դ., hovhaykaz@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ մայիսի 15, 2022, գրախոսելու օրը՝ նոյեմբերի 14, 2022:

¹ Հոդվածը տպագրվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գիտության կոմիտեի տրամադրած դրամաշնորհի շրջանակներում:

² Առ, «Ստեփանոս Նազարյանց», Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1987, Մ. Մխիթարյան, Հյուսիսսափայլ ամսագիրը, Երևան, 1958, Ռ. Նանուկյան, Ստեփանոս Նազարյանց, Երևան, 1978, և այլն:

Կովկասի կառավարչապետ Բարյատինսկուն ուղղված նամակում: Սկզբում, ի գիտություն Կովկասի կառավարչապետ իշխան Ա. Ի. Բարյատինսկու, հայտնվում է Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Ստ. Նազարյանցի՝ Մոսկվայում հայերեն լեզվով «Հյուսիսսփայլ» անունով թերթ հրատարակելու մտադրության մասին, և նշվում է, որ «Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտի պետ, գեներալ ադյուտանտ կոմս Օւլովն իր կողմից այս նախաձեռնության դեմ արգելք չի տեսնում»³: Մեզ մի պահ տարակուսելի թվաց հայ գիտնականի նախաձեռնությանը ռուսական իշխանությունների չխոչընդոտելու հանգամանքը, սակայն նամակի հետագա շարադրանքը այս հարցին կարծես թե պատասխան տալիս է. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայ բնակչության զգալի մասը, որի համար նախատեսվում է «Հյուսիսսփայլը», ապրում է Կովկասյան և Անդրկովկասյան մարզերում, պատիվ ունեմ թույլատրելու այս ձեռնարկի հրատարակությունը, ուստի Ձեր գարեծնությանն եմ ուղղում նաև պ. Նազարյանցի ամսագրի հրատարակման նախագիծը և խնդրում տեղեկացնել ինձ՝ հնարավոր համարում և տեսնում եք արդյոք որևէ խոչընդոտ այս պարբերականի հրատարակման համար», – ասվում էր նախարարի ուղերձ-նամակում⁴:

Իր հերթին, հասկանալով, որ առանց Կովկասի կառավարչապետի թույլտվության ամսագրի հրատարակումը հնարավոր չէ, Ստ. Նազարյանցը նույն թվականի նոյեմբերի 27-ին Մոսկվայում հայերեն լեզվով «Հյուսիսսփայլ» անվանումով ամսագիր հրատարակելու մտադրության և նպատակների մասին նամակ-խնդրագրով դիմում է Կովկասի կառավարիչ իշխան Ալ. Բարյատինսկուն: Նամակի ներածականում կարդում ենք. «Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի դոկտոր, պրոֆեսոր Նազարյանցի նամակը սրբազնագույն իշխան, Կովկասի փոխարքա Ա. Ի. Բարյատինսկուն: 27 նոյեմբերի 1856 թ. Ք. Մոսկվա: Ներկա տարվա մարտի 13-ին պատիվ եմ ունեցել ժողովրդական լուսավորության նախարարի ուշադրությունը հրավիրելու արգի հայերեն լեզվով ամսագիր հրատարակելու նախագծի վրա՝ հատուկ խնդրանքով, թույլատրելու այն հրատարակել Մոսկվայում: Սակայն առ այսօր ինձ անհայտ պատճառներով որևէ տեղեկություն չեմ ստացել»⁵: Ստ. Նազարյանցը ներկայացել է որպես Լազարյան ճեմարանի պրոֆեսոր, այլ ոչ թե անհատ քաղաքացի: Անշուշտ, Արևելյան Լեզուների Լազարյան ինստիտուտն այդ ժամանակ արդեն հայտնի ռուսամենական հաստատություն էր, և նրա անվան հիշատակությունը, կարծում ենք, պատահական չէ: Այդուհանդերձ, հետևենք նամակ-խնդրանքի հետագա շարադրանքին. «Այժմ միայն ինձ տեղեկություններ են հասնում, որ հիշյալ ամսագրի հրատարակու-

³ Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, քղթապանակ 154, վավերագիր 224, ք. 1:

⁴ Նույն տեղում, ք. 1-2:

⁵ Նույն տեղում, վավ. 221, ք. 1:

թյան գործը պետք է համաձայնեցնեմ Կովկասյան երկրամասի կառավարչության հետ, ուստի խնդրում եմ համաձայնություն տալ խնդրո առարկա հարցի կապակցությամբ»⁶: Մեզ հետաքրքրողն, անշուշտ, հրատարակվելիք ամսագրի նպատակների ու խնդիրների մասին Ստ. Նազարյանցի բերած բացատրություններն ու մեկնաբանություններն են: Այդ առումով հատկանշական է նրա առաջին իսկ նկատառումն իր ձեռնարկի մասին. «Հյուսիսափայլը» նա ներկայացնում է որպես գրականագիտական ձեռնարկ: Իսկ առավել ուշագրավը ամսագրի գլխավոր նպատակի ձևակերպումն է. «Գրականագիտական իմ այս ձեռնարկը պետք է ծառայի որպես ժամանակակից պարբերական Ռուսական կայսրության հայերի մեջ՝ տեղեկություններ տալով ռուսական կրթության և գիտության պտուղների մասին, որպեսզի իմ ազգակիցներին բերենք դեպի ռուսական միտք ու կյանք (ընդգծումը մերն է՝ Հ. Հ.)»⁷:

Ամսագիր հրատարակելու հաջորդ կարևոր նպատակը կրթա-մշակութային էր. ըստ Նազարյանցի՝ «Հյուսիսափայլը» պետք է ծառայեր որպես «հուսալի միջոց՝ հայոց պատմությունը դարավոր և մտավոր տեղապտույտից դուրս բերելու և նրանց մեջ ավելի շատ ուրախության զգացումներ ներդնելու համար»⁸: Խնդրագրում Նազարյանցն, իհարկե, մանրամասնում է. «Հայկական հողում ռուսական զենքի պանծալի հաղթանակներից հետո (նկատի ունի Ղրիմի պատերազմի կովկասյան ճակատում 1854-1855 թթ. տարած հաղթանակները՝ Հ. Հ.), կարծում եմ ժամանակն է, որ սերմանվեն ռուսական մտքի, գիտության, արվեստի և քաղաքակրթության ոչ պակաս պանծալի նվաճումները»⁹: Ավելին, Նազարյանցը համոզված էր, որ իր այս ձեռնարկումը «ուղղակիորեն օգուտ կբերի նաև հայերին, որոնց համար գլխավորը Կովկասի սրբազնագույն կառավարչին ծառայելն է և նրա բարեհաճ ուշադրությանն արժանանալը.... ուստի ինձ թույլ եմ տալիս մտածել, որ Ձերդ բարեծնությունը՝ որպես իմաստուն կառավարիչ, կփոխի այս երկրամասի ճակատագիրը և բարեհաճորեն համաձայնություն կտա նախատեսված ամսագիրը հրատարակելու համար»¹⁰, — ասվում է նամակի ավարտին: Նամակ-խնդրանքում ռուսական իշխանություններին ծառայելուն միտված երանգներն անշուշտ գերակշռում են, սակայն կարծում ենք, պետք չէ բացարձակեցնել ռուսական մշակույթի այս «գովասանքները» և մեղադրել Նազարյանցին ռուսամոլության մեջ: Մեր կարծիքով ուղղակի տուրք էր իր ժամանակի ընդունված ձևերին և խնդրագրի հաջողությունն ապահովելու միտում ունեւր. ի վերջո, նրա հայագիտական ժառանգության մեջ բազում հայանպաստ

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

ու հայրենասիրական ոգով գրված հոդվածներ կան: Հետագայում էականորեն սրբագրվեցին նաև ազգային կրթության մասին Ստ. Նազարյանցի դիրքորոշումները, ավելին՝ նա լիովին հանգեց ազգային կրթությունը զարգացնելու գաղափարին¹¹: Ի վերջո, հաշվի պետք է առնել նաև այն հանգամանքը, որ խնդիրը վերաբերում էր իր ամսագրի համար ուսսական իշխանություններից դրական եզրակացություն ստանալուն:

Բ. Ամսագրի հրատարակության համար թույլտվության «ճանապարհը»

Բնականաբար, Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Ստեփանոս Նազարյանցի խնդրանքը պետք է մանրազինին քննության առնվեր Կովկասի կառավարչապետի գրասենյակում: Ալ. Երիցյանի արխիվում պահպանվել է նաև խնդրի առնչությամբ Կովկասի ուսումնական հոգաբարձուի նամակ-տեղեկանքը, ուղղված կառավարչապետ Ալ. Բարյատինսկուն. այնտեղ կարդում ենք. «17 դեկտեմբերի 1856 թ.: Ա. թ. սեպտեմբերի 14-ին պրոֆեսոր Նազարյանցի՝ հայերեն լեզվով «Հյուսիսափայլ» անվանումով ամսագիր հրատարակելու խնդրանքի կապակցությամբ ես պահանջել եմ Կովկասի գրաքննության կոմիտեի եզրակացությունն այն մասին, թե տեսնո՞ւմ է արդյոք նշված ամսագրի հրատարակման որևէ խոչընդոտ՝ ներկայացված ծրագրի համաձայն: Այդ կապակցությամբ ես արդեն ստացել եմ Կոմիտեի եզրակացությունը. Կոմիտեի եզրակացության մեջ ասվում է՝

«1. Հայերեն լեզվով Թիֆլիսում և Անդրկովկասյան մարզերում ուսումնական և գրականագիտական ուղղվածության տարածվող գրքերը հիմնականում գրված են միայն ուսումնականներին հասկանալի լեզվով (նկատի ունեն գրաբարը՝ Հ. Հ.), սակայն քանի որ հետաքրքրասիրությունը զգալիորեն աճել է հայության շրջանում (ուշագրավ դիտարկում է՝ Հ. Հ.), ապա հասանելի լեզվով ավելի շատ հայերի համար Մոսկվայում ամսագրի հրատարակությունն, անկասկած, նրանց մոտ ուժգին հետաքրքրություն կարթնացնի ընթերցանության հանդեպ»¹²: Անշուշտ, չի կարելի չնկատել Կովկասի ուսումնական տեսչության և գրաքննական կոմիտեի եզրակացության մեջ դրական երանգը. Ռուսաստանի գրաքննական խիստ պայմաններում, կառավարության հակահայկական ձեռնարկումների ետնախորքում հայերին արված զիջումը կարևոր է: Մեր կարծիքով, այս փաստի մեջ պետք է տեսնել նաև 19-րդ դարի երկրորդ կեսին հայ մշակույթի աննախադեպ զարգացումը:

¹¹ Հ. Հովհաննիսյան, «Ազգային կրթության Ստ. Նազարյանցի տեսլականը», Պատմություն և մշակույթ, հայագիտական հանդես, 2019, հ. 2, էջ 206-213:

¹² Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավ. 225, ք. 1:

եզրակացության շարունակության մեջ ասվում է.

«2. Պ. Նազարյանցի ներկայացրած ամսագրի չորս գլխավոր բաժինները, այն է՝ ընդհանուր երկրագործություն (մշակություն իմաստով՝ Հ. Հ.), համաշխարհային պատմություն, բնագիտություն և բարոյագիտություն, ցույց է տալիս, որ պ. հրատարակիչը մտադիր է իր ապագա բաժանորդներին առաջարկել շափազանց տարատեսակ, գրավիչ և միաժամանակ օգտակար գրականություն»¹³: Չենք կարող շտարակուսել գրաքննական կոմիտեի դրական եզրակացության այս կետի հանդեպ, ինչը, թերևս բացատրվում է մի կողմից՝ Նազարյանցի որպես Լազարյան ինստիտուտի պրոֆեսոր ներկայանալու փաստով և, ինչ խոսք, ռուսական արքունիքում և մայրաքաղաքներում Լազարյան գերդաստանի ունեցած ազդեցիկ դիրքով: Կոմիտեի եզրակացության մեջ ևս մեկ ուշագրավ գրառում կա. «3. Կոմիտեին հայտնի է, որ Թիֆլիսում 1851 թ. հոգևորական Պատկանովի կողմից հրատարակվող թերթը (խոսքը Գաբ. Պատկանյանի «Արարատ» հանդեսի մասին է՝ Հ. Հ.), գրական ու գիտական ոլորտներում իր թերություններով հանդերձ, ուներ բավական մեծ թվով բաժանորդներ, սակայն այն դադարեցրեց իր գոյությունը՝ լեզվականան հասանելիության պատճառով»¹⁴: Մեր դիտարկումը հետևյալն է. անշուշտ, պետք է ընդունել 19-րդ դարում գրաբարով հրատարակվող պարբերականներին՝ հասարակության լայն զանգվածների համար անհասանելի մնալու իրողությունը, ինչը նկատել են նույնիսկ ռուս աստիճանավորները, և այդ առումով դիտողությունը տեղին է: Ավելին, գրաքննական կոմիտեն արտահայտել է ուշագրավ մեկ այլ դիտարկում ևս. «4. Մինչ վերջին պատերազմը (նկատի ունի Ղրիմինը 1853-1856 թթ.՝ Հ. Հ.), Անդրկովկասում հայերը բաժանանորդագրվում էին վեց հայկական թերթերի. «Մասիս», «Նոյեան աղանի» (Կոստանդնուպոլիս), «Արշալոյս Արարատեան» (Զմիւռնիա)... «Եւրոպա»՝ Վանում և ևս երեք ամսագիր Կոստանդնուպոլսում: Այս պարբերականներն ունեն զգալի թվով բաժանորդներ, ինչը հաստատում է հայերի ջանադիր հետաքրքրությունն ու ցանկությունը՝ հետևելու Եվրոպայի և Ասիայի իրադարձությունների ընթացքին: Ուստի, բնական է, որ քաղաքական իրադարձություններն այդ պարբերականներում անկողմնակալ չեն ներկայացված. դրանց մի մասը մեր հայրենիքի հանդեպ ունի թշնամական դիրքորոշում»¹⁵: Ուստի, գրաքննական կոմիտեի հետագա եզրակացությունը մեզ բերում է այն համոզման, որ հայ պարբերականներին ներկայացվող այս դիտարկումը պատահական չի արված: «Եթե պ. Նազարյանցը պարբերականի նախատեսվող այդ չորս բաժիններին ավելացնի հինգերորդը, այն է՝ ամսական կտրվածքով

¹³ Նույն տեղում, թ. 1-2:

¹⁴ Նույն տեղում, թ. 2:

¹⁵ Նույն տեղում:

ներկայացնի ուսական կառավարության գլխավոր որոշումներն ու քաղաքական իրադարձությունների մասին վերլուծությունը, — ասվում է այնուհետև եզրակացության մեջ, — ապա գրաքննական կոմիտեի կարծիքով, նոր ամսագիր «Հյուսիսափայլը», ավելի մեծ օգուտ կարող է բերել Ռուսաստանում ապրող հայ ժողովրդին (ընդգծումն իրենցն է՝ Հ. Հ.)»¹⁶:

Ակնհայտ է, որ ուսական իշխանությունների մտահոգությունը Ստ. Նազարյանցի նոր ամսագրի միջոցով ուսական քաղաքականության քարոզումն ու տարածումն է: Կոմիտեն քաջ գիտակցում էր, որ ամսագիրը դառնալու էր համահայկական պարբերական և իր բաժանորդներն էր ունենալու հայահոծ երկրներում և քաղաքներում: Ուստի և եզրակացության վերջում հստակ ընդգծվում է. «Այդպիսով կոմիտեն ամբողջացնում է, որ այն դեպքում, երբ բարձրագույն ղեկավարությանը բարեհաճ կլինի նոր ամսագրի հրատարակության թույլատվության հարցում, ներկայացված չորս բաժիններով և մեր հայտնած ցանկությամբ հանդերձ, ապա պ. Նազարյանցի ծրագիրը լիովին հավանության արժանի է»¹⁷: Այլ խոսքով, Ստ. Նազարյանցին չեն մերժում, սակայն առաջարկում են «հինգերորդ բաժնի լրացումը», ինչը լիովին ըմբռնելի է մամուլի հարցում ուսական կառավարության քաղաքականության համատեքստում:

Գ. «Հուսիսափայլ» հրատարակության թույլտվության ստացումը

Կովկասի ուսումնական տեսչությունը գրաքննական կոմիտեի այս եզրակացությունը ներկայացնում է Կովկասի կառավարչապետի գրասենյակ, և այնտեղ վերջնական տեսքի է բերվում ժողովրդական լուսավորության նախարարություն ուղարկվող կարծիքը: 1856 թ. դեկտեմբերի 31-ին Ռուսաստանի ժողովրդական լուսավորության նախարարին հասցեագրված նամակում ասվում էր. «... օգոստոսի 24-ին Մոսկվայում ամսագիր հրատարակելու խնդրանքով Ձեզ է դիմել Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտի պրոֆեսոր Նազարյանցը՝ ժամանակակից հայերենով, «Հյուսիսափայլ» անունով, հրատարակման համար նախատեսվող ծրագրով... իմ կողմից որևէ առարկություն չկա»¹⁸: Եվ այդուհանդերձ, Կովկասի կառավարչապետը Նազարյանցին ուղարկած պատասխան նամակում «իր պարտքն էր համարել ծրագիրն ամբողջացնելիս՝ օգտակար համարել ամսագրում նախատեսված չորս բաժիններին ավելացնել հինգերորդ, այսինքն՝ Կառավարության գլխավոր որոշումների տեսության բաժինը և քաղաքական իրադարձությունները՝ ամսվա վերջին համարում, եթե իհարկե,

¹⁶ Նույն տեղում, ք. 3:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում, վավ. 222, ք. 1:

այս լրացումը դուք ճիշտ եք համարում: Գեներալ-ադյուտանտ, իշխան Ա. Բարյատինսկի»¹⁹: Այլ խոսքով, ռուսական իշխանությունները վերահաստատում են իրենց տեսակետը: «Հյուսիսափայլի» հրատարակման հարցի քննարկումների ավարտն ամփոփված է Կովկասի կառավարչապետ Ա. Ի. Բարյատինսկուն ուղղված Ստ. Նազարյանցի նամակում, որը ևս բարխղձորեն պահպանված է Ալ. Երիցյանի արխիվում: Այս նամակը լեցուն է Ստ. Նազարյանցի՝ Կովկասի կառավարչապետի հանդեպ արտահայտած երախտագիտական զգացումներով. նամակում կարդում ենք. «Մոսկվա: 13 օգոստոսի 1857 թ: Ողորմած տեր, Ալեքսանդր Իվանովիչ, Մոսկվայում հայերեն լեզվով Հյուսիսափայլ անվանումով ամսագիր հրատարակելու խնդրի հանդեպ Ձեր արտահայտած բարեհաճ համաձայնությունն արդյունքում, ժողովրդական լուսավորության նախարարությունից ստացա իմ ներկայացրած պարբերականը հրատարակելու Ինքնակալական թույլտվություն: Հաղորդելով Ձեզ անկեղծ երախտագիտությունս իմ գրական նախաձեռնությունն աջակցելու համար, ինձ թույլ եմ տալիս մտածել, որ Ձերդ սրբազնությունը, որպես Ռուսաստանում ամեն օգտակար նախաձեռնության հովանավոր, չի մերժի և բարեհաճ կգտնվի ամսագրի հետագա հաջողությունների հանդեպ, որի ուղղակի նպատակը Ռուսաստանի հայերի շրջանում ռուսական լուսավորության և գիտության տարածումն է, Ասիացի-հայերի հոգևոր-բարոյական մերձեցումը Ռուս-եվրոպացիների հետ»²⁰: Ստ. Նազարյանցն այստեղ, իհարկե, չափազանցնում է. ռուսներն իրենց երբեք եվրոպացիներ չեն համարել (սլավոններ՝ այո, բայց ոչ եվրոպացիներ՝ չ. չ.): Հավելենք, որ 19-րդ դարի մեր հասարակական-քաղաքական գործիչներին չլքեց, մեղմ ասած՝ ռուսական իշխանություններին «դուր գալու» միտումը, ինչը պետականության բացակայության հետևանքն էր: Եվ, իհարկե, Ստ. Նազարյանցն այդ շարքում միակն ու եզակին չէր...

Շարունակենք հետևել Ստ. Նազարյանցի երախտագիտական նամակին. «Ավելորդ չեմ համարում այստեղ ամբողջացնել այն միտքը, որ իմ նախաձեռնած հրատարակությունից սպասվող օգուտը ակնհայտ կլինի Կովկասի՝ որպես Ռուսաստանում հայկական բնակչության հիմնական բնակատեղիի հայերի համար»²¹: Ստ. Նազարյանցն ի նշան երախտիքի պետք է գովաբաներ նաև ռուսական կառավարությանը, ինչ էլ ջանադրաբար կատարում է. «Ինչպես որ ակնհայտ է Ռուսական կառավարության բարեհաճությունը հայ ժողովրդի հանդեպ, — գրում է նա, — ինչպես որ մեծ է իմ պատրաստակամությունը ուժերիս ներածին չափով աշխատելու Ռուսաստանում կրթական գործի բարեփոխման համար,

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում, վավ. 226, ք. 1:

²¹ Նույն տեղում:

սակայն ազգից, որն այդքան ցածր տեղ է զբաղեցնում կրթական աստիճանի վրա և գրեթե բացառապես նվիրվել է գույքային շահին (ընդձուռմը մերն է՝ Հ. Հ.), դժվար է սպասել ջերմ կարեկցանք կենսական հարցերի հանդեպ, ուստի իմ ամսագրի հաշտությունն առանց հզոր կառավարության հետ հատուկ համագործակցության և հովանավորության կասկածելի է թվում: Հանգամանք, որը ստիպում է ինձ դիմելու Ձեզ թախանձագին խնդրանքով... Ձեզանից կախված հարցերում աշակցել մեր ամսագրի տարածմանը Կովկասում...»²²: Ստ. Նազարյանցը շարունակում է երախտիքի խոսքեր շուրջել Կովկասի կառավարչապետի հասցեին, և նամակն ավարտում է ամսագրի «պրակտիկ» կողմի՝ բաժանորդագրության և ամսագրի գնի մասին ուշագրավ տեղեկություններով. «Իմ ամսագիրը, որը լույս կտեսնի 8-10 տպագրական էջով... մեծ մասը նվիրված կլինի բնագիտությանը և հայտնի մարդկանց, պատմական դեմքերի կենսագրականներին և կարժենա 8, փոստային ծառայությամբ 9,5 ռուբլի (նշենք, որ այն ժամանակ դա քիչ գումար չէր՝ Հ. Հ.)»²³: Եվ վերջապես, Ստ. Նազարյանցի տեղեկամամբ, «Հյուսիսսփայլ» լույս ընծայումը նախատեսվում էր 600 տպաքանակով (ինչը ևս քիչ քանակ չէր այն ժամանակվա համար՝ Հ. Հ.), որից 10 օրինակ խմբագիր Ստ. Նազարյանցը նվիրաբերելու էր կառավարչապետի գրասենյակին²⁴: Հետագայում արդեն, երբ Ստ. Նազարյանցը դժվարություններ ունեցավ ամսագրի տարածման հարցում, նա կրկին նամակով դիմեց իշխան Բարյատինսկուն, որը «կարգադրեց, որ Մոսկվայի հայ ամսագրի տարածման գործին մասնակցեն տեղական իշխանությունները: Այդ մտքով նա հրամաններ էր ուղարկում նահանգապետներին»²⁵, – գրում է Լեոն:

1857 թ. մարտի 23-ին Ռուսաստանի ժողովրդական լուսավորության նախարարությունը թույլատրում է «Հյուսիսսփայլ» ամսագրի հրատարակումը, որը հետագայում հաստատվում է կայսր Ալեքսանդր երկրորդ կողմից, և ցարական գրաքննիչ է նշանակվում Պետերբուրգի համալսարանի հայազգի գիտնական Մկրտիչ Բերոյանը (Բերոնը)²⁶:

Այսպիսով, Մաշտոցյան Մատենադարանում Ալ. Երիցյանի արխիվում խնամքով պահպանված և միմյանց հաջորդող վավերագրերը բացահայտում են Ստեփանոս Նազարյանցի կողմից «Հյուսիսսփայլ» ամսագրի հրատարակության հանգամանքներն ու նախապատմությունը, հստակություն են մտցնում նշանավոր այդ պարբերականի լույս ընծայման խնդրում:

²² Նույն տեղում, ք. 1-2:

²³ Նույն տեղում, ք. 2:

²⁴ Սակայն ամսագրի տպաֆանակը լավագույն տարիներին նույնիսկ չի գերազանցել 340-ը: Տե՛ս Մ. Մխիթարյան, նշվ. աշխ., էջ 43:

²⁵ Լեո, նշվ. աշխ., էջ 85:

²⁶ Նույն տեղում, էջ 34:

HAYKAZ HOVHANNISYAN

**MATENADARAN, ARCHIVE OF AL. YERITSYAN: PREHISTORY
OF THE PUBLICATION OF THE JOURNAL "NORTERN LIGHTS"**

Key words: Matenadaran, Al. Yeritsyan archive, Stepanos Nazaryants, journal *Northern Lights*, publication history, permission, free press, Russian policy.

One of the volumes of the archive of Al. Yeritsyan at the Mashtots Matenadaran preserves documents that reveal the important circumstances and background of the publication of the Armenian journal *Northern Lights* by Stepanos Nazaryants in 1857.

The story starts with a letter-petition of Stepanos Nazaryants dated March 13, 1856, to the Minister of Public Education of Russia Norov, in which he detailed his intention to publish a journal in modern Armenian in Moscow. The Russian government did not create particular obstacles for the Armenian scholar to publish the journal, which seems a little strange for those times, bearing in mind the fact that Nazaryants belonged to the liberal wing of the Armenian national movement.

In the petition of St. Nazaryants detailed the goals and objectives of the new edition; he presented it not as a social-political, but as a literary journal, a periodical for Armenians living in Russia, which should serve to provide information on Russian education, “informing my compatriots about the Russian science, introducing the Russian thought and life to them,” as writes Nazaryants.

Although in his letter St. Nazaryants shows obvious intention for serving the Russian government, one should not exaggerate the role of his “praise” of Russian culture and accuse Nazaryants of Russophilia. His Armenological heritage is dominated by the patriotic attitude in the matters of national culture and education.

Finally, on the basis of the conclusions of the Caucasian Educational Inspectorate, the Audit Commission of the Office of the vicegerent of the Caucasus and the Ministry of Public Education, on August 13, 1857 Emperor Alexander II approved the petition of the professor of the Lazaryan Institute of Oriental Languages St. Nazaryants to publish the journal *Northern Lights* in modern Armenian, according to the planned program. However the *Northern Lights* was later published without the fifth point proposed by the Russian governors, which was supposed to elucidate the “government decisions.”

ԱԿԱԶ ՕԳԱՆԵՍՅԱՆ

**МАТЕНАДАРАН, АРХИВ АЛ. ЕРИЦЯНА: ПРЕДЫСТОРИЯ ИЗДАНИЯ
ЖУРНАЛА “СЕВЕРНОЕ СИЯНИЕ”**

Ключевые слова: Матенадаран, Архив Ал. Ерицяна, Степанос Назарянц, журнал “Северное сияние”, история издания, разрешение, свободная пресса, российская политика.

В одном из томов архива Ал. Ерицяна в Матенадаране имени Маштоца хранятся документы, раскрывающие важные обстоятельства и предысторию издания Степаносом Назарянцем журнала “Северное сияние” в 1857 году.

Все начинается с письма-прошения Степаноса Назарянца от 13 марта 1856 г., адресованного министру народного просвещения России А. С. Норову, в котором Ст. Назарянц подробно излагает свое намерение издавать в Москве журнал на современном армянском языке. Российские власти не создают армянскому ученому особых препятствий, несмотря на факт принадлежности Ст. Назарянца к либеральному крылу армянского национального движения.

В прошении Ст. Назарянц подробно изложил цели и задачи нового издания; примечательно, что он представил его не как общественно-политический, а как литературный журнал, периодическое издание для проживающих в России армян, которое должно служить информационному обеспечению российского образования, “о плодах науки приобщения соотечественников к русской мысли и жизни”, как пишет Назарянц.

На основании заключений Кавказской образовательной инспекции, Ревизионной комиссии Канцелярии заместителя Кавказа и Министерства народного просвещения, император Александр II 13 августа 1857 года дал положительный ответ на прошение профессора Лазаревского института восточных языков Степаноса Назарянца об издании журнала “Северное сияние” на современном армянском языке по намеченной программе, однако журнал впоследствии публиковался без предложенного российскими властями пятого раздела, который должен был освещать “решения правительства”.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

Ազատ Բոզոյան

Անտիոֆի դերը Լևոն Մեծագործի ֆաղափականության մեջ..... 5

Կարեն Մաթևոսյան

Ռուսի սուլթանության հակաթոռ կաթողիկոս Անանիան 22

Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները
հայ-մոնղոլական հարաբերություններում 40

Էլինա Ղազարյան

Հարավային Կովկասի ֆաղափների դերը տարանցիկ
առևտրում ըստ Ժ.-ԺԴ. դարերի պարսկական և արաբական
պատմաաշխարհագրական երկերի 60

Գեորգի Միրզաբեկյան

1590 թ. Մելիֆ-Արալանլուի օսմանյան հարկացուցակը..... 74

Հայկազ Հովհաննիսյան

Մատենադարանի Ալ. Երիցյանի արխիվ. «Հյուսիսսփայլ» ամսագրի
հրատարակման նախապատմությունը..... 83

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Գևորգյան

Գրիգոր Բ. Վկայասերի նախաձեռնած թարգմանական շարժումը 93

Դոնարա Կարապետյան

Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» բժշկարանի
գրավոր աղբյուրները..... 113

Աննա Օհանջանյան

Դավանանքից դավանաբանական անցնելով. հայ կաթողիկ Հովհաննես Մշեցին և նրա
հեղինակած «Բանալի նշմարտութեան» գիրքը (անգլերեն)..... 131

ԱՐՎԵՍ

Ավետ Ավետիսյան

«Իսահակի զոհաբերության» պատկերագրական տարբերակները
հայկական մանրանկարներում..... 166

Սեդա Մանուկեան

Բոնաշէնի մանրանկարչութեան մի օրինակ (Մատենադարանի ձեռ. 10789)..... 199

Աննա Արեշատյան

Դիտարկումներ Մակար Եկմայանի և Կոմիտասի դաշնակաձ պատարագի
մոնոդիաների մեղեդիական մտածողության շուրջ..... 212

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Անի Առաքելյան

Սուլեյման Դարաշամբեցի կատակերգակը և նրա նորահայտ երկերը..... 233

Լուսինե Թումանյան

Հովհաննես Բրգութենցի գանձերն ու տաղերը 268

Հասմիկ Կիրակոսյան

Նորահայտ մի փաստաթուղթ Շուշիում ավետարանական ֆարոգիչների
գործունեության մասին 295

Միհրան Մինասեան

Մշոյ Ս. Առաքելոց, Մատնավանք և Ս. Յովհաննէս վանքերու թեմական
գիւղերու, Բասենի ու Թախթի հայկական եկեղեցիներու, վանքերու և
գերեզմանատուններու անտիպ ցուցակ (1861-1866 թթ.)..... 305

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գեորգ Տէր-Վարդանեան

Հայերէն հնատիպ գրքերի ձեռագիր գրառումների և գրադարանային
նշումների Դիւանի կազմութեան ծրագիրը 321

Տաթևիկ Մանուկեան, Քնարիկ Սարգսեան

Մաշտոցեան Մատենադարանի հնատիպ գրքերի ձեռագիր և
գրադարանային նշումները (ընդհանուր պատկեր) 330

Հերմինէ Գրիգորեան

Յուցակ կիսաբունի Կիլպէնկեան թանգարանի հայերէն ձեռագրերի..... 350

ԲԱՆԱՎԵՃ**Նարինէ Վարդանյան**

«Կանոնագիրք հայոց» ժողովածուի զարգացման պատմությունը. ուսումնասիրություն, թե՞ խեղաթյուրում 377

ՀԱՂՈՐԴՈՒՄ**Մանեա Էնա Շիրինյան**

Բյուզանդագետների համաշխարհային XXIV համաժողովը 420

ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ**Նազենի Ղարիբյան**

Վասն կենաց եւ գործոց Նինայի Գարսոյեան (1923-2022) 432

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ

ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ 438

CONTENTS

HISTORY

Azat Bozoyan

The Role of Antioch in the Policy
of Levon the Magnificent5

Karen Matevosyan

Anticatholicos Anania of the Sultanate of Rum22

Gagik Danielyan

Official Correspondence and Diplomatic
Gifts in the Armenian-Mongol Relations (part 3).....40

Elina Ghazaryan

The Role of South Caucasian Towns
in Transit Trade According to the Persian and Arabic
Historico-Geographical Works of 10th-14th Centuries.....60

Georgi Mirzabekyan

The Ottoman Tax Register of Melik-Arslanlu of 1590.....74

Haykaz Hovhannisyan

Matenadaran, Archive of Al. Yeritsyan: Prehistory
of the Publication of the Journal “Nortern Lights”.....83

PHILOLOGY

Davit Gevorgyan

The Translational Movement Initiated by Grigor II V kayaser.....93

Donara Karapetyan

The Written Sources of Asar Sebastats‘i’s
Book of Medical Art.....113

Anna Ohanjanyan

Jumping In and Out of Confessions: The Armenian Catholic Yovhannēs
of Mush and his Book *Key of Truth*.....131

ART

Avet Avetisyan

The Iconographic Versions of *the Sacrifice Of Isaac*
in Armenian Miniatures.....166

Seda Manukyan

A Specimen of the Břnashen Miniature Art..... 199

Anna Arevshatyan

Observations on the melodic thinking in
the monodies of the Liturgy in the arrangements
by Makar Yekmalian and Komitas..... 212

PUBLICATIONS**Ani Arakelyan**

Comedian Suleiman Darashabets‘i and
His Newly Discovered Poems..... 233

Lusine Tumanyan

The Litanies and Odes of Yovhannēs Brgut‘Ents‘ 268

Hasmik Kirakosyan

A Recently Discovered Document about the Activity
of Evangelical Missionaries in Shushi..... 295

Mihran Minassian

A Previously Unpublished List of Diocesan Villages of the
Monasteries of Surp Arakelots in Mush, Madnavank and Surp Hovhannes,
as well as Armenian Churches, Monasteries and Cemeteries
of Pasen and Takht (1861–1866)..... 305

BIBLIOGRAPHY**Georg Ter-Vardanean**

The Program of Composing the Corpus of
Handwritten Remarks and Library Notes in
Armenian Early Printed Books..... 321

Tatevik Manukyan, Knarik Sargsyan

Handwritten and Library Notes of Early Printed Books
of Mesrop Mashtots Matenadaran (General Picture)..... 330

Hermine Grigoryan

Catalogue of the Armenian Manuscripts of the
Gulbenkian Museum in Lisbon..... 350

DISCUSSION**Narine Vardanyan**

History of the Development of the Armenian Book of Canons.

Study or Misrepresentation?.....377

REPORT**Manea Erna Shirinian**

The XXIV International Congress of Byzantine Studies.....420

OBITUARY**Nazenie Garibian**

The Life and Work of Nina Garsoïan (1923-2022).....432

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

| | |
|---|----|
| Азат Бозоян | |
| Роль Антиохии в политике Левона Великого..... | 5 |
| Карен Матевосян | |
| Антикатоликос румского султаната Анания..... | 22 |
| Гагик Даниелян | |
| Официальная переписка и дипломатические дары в армяно-монгольских отношениях (часть 3)..... | 40 |
| Элина Казарян | |
| Роль Городов Южного Кавказа в транзитной торговле по данным персидских и арабских историко-географических трудов X-XIV веков..... | 60 |
| Георгий Мирзабекян | |
| Османский налоговый реестр Мелик-Арсланлу 1590 г. | 74 |
| Айказ Оганесян | |
| Матенадаран, архив Ал. Ерицяна: Предыстория издания журнала “Северное сияние”..... | 83 |

ФИЛОЛОГИЯ

| | |
|--|-----|
| Давид Геворгян | |
| Переводческое движение, начатое Григором II Вкаясером..... | 93 |
| Донара Карапетян | |
| Письменные источники лечебника Асара Себастици “Книга врачебного искусства”..... | 113 |
| Анна Оганджян | |
| Переходя из одной конфессии в другую: армяно-католик Ованес из Муша и его книга «Ключ истины»..... | 131 |

ИСКУССТВО

| | |
|--|-----|
| Авет Аветисян | |
| Иконографические варианты “Жертвоприношения Исаака” в армянских миниатюрах..... | 166 |
| Седа Манукян | |
| Образчик брнашенской школы миниатюры..... | 199 |
| Анна Аревшатян | |
| Наблюдения над мелодическим стилем монодий литургии в многоголосных обработках Макара Екмаляна и Комитаса..... | 212 |

ПУБЛИКАЦИИ

Ани Аракелян

Сатирик-комик Сулейман Дарашамбский и его неизвестные стихотворения..... 233

Лусине Туманян

Гандзы и таги Ованеса Бргутенца 268

Асмик Киракосян

Новонайденный документ, описывающий деятельность евангелических миссионеров в Шуши 295

Мигран Минасян

Ранее не публиковавшийся список епархиальных сёл монастырей Сурб Аракелоц, Матнаванк и Сурб Ованес, а также армянских церквей, монастырей и кладбищ Басена и Тахта (1861-1866 гг.)..... 305

БИБЛИОГРАФИЯ

Геворг Тер-Варданян

Программа составления свода рукописных записей и библиотечных заметок на старопечатных армянских книгах 321

Татевик Манукян, Кнарик Саргсян

Рукописные и библиотечные записи старопечатных книг Матенадарана им. Месропа Маштоца (общая картина)..... 330

Эрмине Григорян

Каталог армянских рукописей, хранящихся в музее Гюльбенкяна в Лиссабоне 350

ДИСКУССИЯ

Нарине Варданян

История развития “Армянской Книги канонов”. Исследование или искажение фактов? 377

СООБЩЕНИЕ

Манеа Эрна Ширинян

XXIV всемирный конгресс византинистов 420

НЕКРОЛОГ

Назени Гарибян

Жизнь и деятельность Нины Гарсоян (1923-2022)..... 432

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 34

BULLETIN OF MATENADARAN

Volume 34

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 34

Համակարգչային ձևավորումը և էչադրումը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 28

տպաֆանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ք. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի քվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/